ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 133-Ա

<<30>> հոկտեմբերի 2025 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 108-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 28-րդ հոդվածի 4-րդ մասի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի դրույթներով, հաշվի առնելով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 12-ի N 108-Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Մարալիկ քաղաքի արվեստի դպրոցի շենքի 303 քառակուսի մետր մակերեսով տարածքի անհատույց, տաս տարի ժամկետով <<Հայ առաջադեմ երիտասարդություն>> հասարակական կազմակերպությանը տրամադրելու ոչ նպատակահարմությունը"

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 12-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող Մարալիկ քաղաքի արվեստի դպրոցի շենքի 303 քառակուսի մետր մակերեսով տարածքը անհատույց, տաս տարի ժամկետով <<Հայ առաջադեմ երիտասարդություն>> հասարակական կազմակերպությանը տրամադրելու մասին>> N 108-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ՝ 11	**դեմ՝ 0**	**ձեռնպահ՝0**
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------

Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ ---------- ---------- ----------

Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ ---------- ---------- ----------

Ա. ՇԱԲՈՅԱՆ ---------- ---------- ----------

Հ. ՁԱՏԻԿՅԱՆ ---------- ---------- ----------

Ժ. ԱԼԵՔՅԱՆ ---------- ---------- ----------

Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ ---------- ---------- ----------

Ն. ՍԱՐՈՅԱՆ ---------- ---------- ----------

Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ ---------- ---------- ----------

Մ. ԵՆՈՔՅԱՆ չի մասնակցել քվեարկությանը ---------- ----------

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ ---------- ----------

Գ. ՊՈՂՈՍՅԱՆ ---------- ---------- ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

<<30>> հոկտեմբերի 2025 թ.
քաղաք Մարալիկ